10 ԱՊՐԻԼ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 56(5139)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Սերժ Սարգսյան. «Ընտրություններով ոչինչ չի ավարտվում, այլ սկսվում է նոր փուլ»



Նախագահի պաշտոնը ստանձնելուց եւ երդվելուց հետո Հայաստանի նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ԱԺ հատուկ նիստի ժամանակ հանդես եկավ ելույթով:

«Այսօրվա երդման արարողությամբ ես կրկին ստանձնեցի մեծ պատասխանատվություն, որի գիտակցումը անցած հինգ տարիների ընթացքում ինձ չի լքել ոչ մի վայրկյան: Վեհամոր ավետարանը, որի վրա ես երդվեցի, հազար տարվանից էլ հին է: Նման պատմական ու մշակութային հենք ունեցող ազգի ղեկավար կարգվելը բացառիկ պատիվ է: Այս հանդիսավոր պահին ես խոստանում եմ այդ պատիվը բարձր պահել:

Որեւէ նախագահի համար Սահմանադրությամբ նախատեսված երկրորդ ժամկետն ունի ե՛ւ իր առավելությունները, ե՛ւ իր բարդությունները: Հիմնական առավելությունը, իհարկե, կուտակված փորձն է, որ նման աշխատանքի դեպքում խիստ արժեքավոր է: Լրացուցիչ բարդությունները կապված են ժողովրդի ավելի մեծ ակնկալիքների եւ ավելի բարձր պահանջների հետ: Ես անելու եմ ամեն ինչ` այդ ակնկալիքներն ու պահանջները կյանքի կոչելու համար», նշեց Սերժ Սարգսյանը` առաջիկա հինգ տարվա համար առաջնահերթ խնդիր համարելով տնտեսական առաջընթացը: Հայաստանի խնդիրներից առանձնացրեց արտագաղթը, գործազրկությունը, աղքատությունը, որոնց լուծումները եւս տնտեսական առաջընթացի հարթությունում են: Հաջորդ առաջնահերթությունները համարեց իրավունքի գերակայությունն ու ժողովրդավարության խորացումը. «Համեմատե՛ք հինգ տարի առաջվա Հայաստանը այսօրվա Հայաստանի հետ եւ կտեսնեք տարբերությունը: Համեմատե՛ք խոսքի, մամուլի, հավաքների ազատության մակարդակները: Համեմատե՛ք հասարակական կազմակերպությունների եւ ընդհանրապես քաղաքացիական հասարակության կայացածության մակարդակները: Խոստանում եմ, որ եղածով չենք բավարարվելու, կանգ չենք առնելու... Մեր հիմնական խնդիրն է` ավելացնել այդպիսի մարդկանց համար դրսեւորվելու ուղիները: Տա՛նք մարդկանց հնարավորությունը` մնացած ամեն ինչ նրանք իրենք կանեն, կարարեն, կստեղծեն, կզարգացնեն:

Նաեւ այդ նպատակով մենք պետք է ապահովենք Հայաստան-սփյուռք գործակցության դինամիկ զարգացումը: Ես վստահ եմ` մենք միասին կարող ենք շատ ավելին անել: Մենք պետք է առավելագույնս ներգրավենք սփյուռքի ներուժը, առաջին հերթին` մարդկային կապիտալը: Մրցունակ եւ զարգացման տանող յուրաքանչյուր ներդրումային ծրագիր կստանա Հայաստանի Հանրապետության իշխանությունների աջակցությունը», նշել է նորընտիր նախագահը` վերջում հավելելով. «Ընտրարշավի ժամանակ մենք բոլորս խոսելու եւ մեր ծրագրերը ներկայացնելու լայն հնարավորություններ ունեցանք: Միաժամանակ, մեզնից յուրաքանչյուրը մտահոգված էր նրանով, որ իր ասելիքը հնարավորինս մանրամասն եւ ամբողջական կերպով տեղ հասնի: Ընտրություններով ոչինչ չի ավարտվում, այլ սկսվում է նոր փուլ: Այժմ եկել է տքնաջան ու հետեւողական աշխատանքի փուլը: Այժմ ժամանակն է խոսքից գործին անցնելու, խոսքերը գործերով ամրագրելու»:

Նա նաեւ անդրադարձել է ԼՂ հիմնահարցին` նշելով. «Մենք պատերազմ չենք ցանկանում, սակայն, միաժամանակ, պատրաստ ենք դիմագրավելու յուրաքանչյուր մարտահրավեր»:

Ս. Խ.

# Երկու երդմնակալությունները եւ երեկոյան ցույցը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**Երեկ Ազգային ժողովի հատուկ նիստում երդմամբ նախագահի պարտականությունները ստանձնեց նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանը: Ազատության հրապարակում բավական ստվար հանրահավաքավորների հետ առանց Ավետարանի ժողովրդի հետ կրկնաբերան երդվեց նաեւ Րաֆֆի Հովհաննիսյանը:**

**Սերժ Սարգսյանին երդվելու հրավիրեց Ազգային ժողովի նախագահը, Սերժ Սարգսյանը երդվեց մոտ 2 հազար հյուրերի, Ազգային ժողովի**







**99 պատգամավորների եւ տասնյակ հեռուստակայանների ուղիղ եթերի հեռուստադիտողի համար, ձեռքը դնելով Սահմանադրության եւ Վեհամոր Ավետարանի վրա: Րաֆֆի Հովհաննիսյանը երդվեց ոչ Սահմանադրությամբ նախատեսված տեքստով, հանդիսատեսը մոտ երեսուն հազար հանրահավաքավորն ու «Սիվիլնեթի» ուղիղ եթերի հեռուստադիտողն էին:**

**Սերժ Սարգսյանին օրհնեց Ամենայն հայոց կաթողիկոսը, Րաֆֆին օրհնող հոգեւորական չկար:**

**Սերժ Սարգսյանը, ձեռքը դնելով Ավետարանի եւ Սահմանադրության վրա, արտասանեց Սահմանադրությամբ սահմանված հետեւյալ խոսքերը. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը` երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները` հարգել մարդու »ւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը »ւ անվտանգությունը` ի փառս Հայաստանի Հանրապետության եւ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի»:**

**Րաֆֆին ասաց` «Այստեղ չկա Աստվածամոր Ավետարան, չկա, կեղծիք, սուտ, 30 արծաթ, կեղծ քարոզներ եւ կեղծ ելույթներ նախագահականից, կա հայ ժողովուրդ» ու սկսեց. «Հանուն հավատքի եւ հանրապետության, ես` ՀՀ քաղաքացիս, այսօր, ներկա ապօրինի իշխանության հետ հայտարարում եմ. չեմ ճանաչում կեղծ ղեկավարներին (ժողովուրդը հետը կրկնում էր ամեն չեմ-ի հետ), չեմ հնազանդվելու սուտ պահանջներին, չեմ ենթարկվելու անիրավ հրամաններին, ես լիազորված եմ իրավունքով, պաշտպանված եմ Սահմանադրությամբ, չեմ վախենում ու չեմ վաճառվում, չեմ նահանջում: Մենք` Հայաստանի 4-րդ հանրապետության քաղաքացիներս, երդվում ենք մեր պապերի երազանքով, մեր երեխաների ապագայով, մեր պետության Սահմանադրությամբ, որ պայքարելու ենք, պայքարելու ենք ամենուր` սիրով, հավատքով, չենք հոգնելու, չենք հիասթափվելու, հույս ենք տալու, ուժ ենք տալու իրար, հաղթելու ենք: Մենք` Նոր Հայաստանի հպարտ քաղաքացիներս, սուրբ Արարատի շուքի ներքո կառուցելու ենք մեր իսկական հայրենիքը, որտեղից չեն փախչում մեր եղբայրներն ու քույրերը, որտեղ վերադառնում են բոլոր հայերն ու հայաստանցիները, որտեղ կա իրավունք, աշխատանք, ապագա, կա ընտրված նախագահ: Արդարության օրը հեռու չէ»:**

**Մարզահամերգային համալիրում ապահով, ապագան լուսավոր տեսնող, թանկարժեք կոստյումներով տղամարդիկ ու պճնված կանայք էին նախագահ Սարգսյանի երդմնակալության մասնակիցը: Ազատության հրապարակում` հոգնած, մարզերից ոտքով եկած, ապագայի եւ ապահով ապրելակերպի հանդեպ հույս չունեցող հայերը, եւ այս երկու Հայաստանների հակադրությունը նույն ժամանակի միավորի մեջ երկու տեղում էլ եղած լրագրողիս համար պարզապես ակնառու էր:**

*Տես էջ 2*

# ԱՄՆ. Ուժի գործադրումը չի լուծի հակամարտությունը

ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին Ստամբուլում քննարկումներ է ունեցել Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հետ, ու վերջինս էլ այդ հանդիպումից հետո հայտարարություններ էր արել` անդրադառնալով Հայաստանին ու ղարաբաղյան բանակցություններում միջնորդական առաքելություն իրականացնող Մինսկի խմբի գործընթացին:

Քերիի հետ քննարկումներում ղարաբաղյան հարցին անդրադարձի առնչությամբ ադրբեջանական լրատվամիջոցի լրագրողի հարցին վերջին ճեպազրույցում արձագանքել է պետքարտուղարության փոխխոսնակ Պատրիկ Վենթրելը: Լրագրողը հետաքրքրվել է, թե ինչ է քննարկվել ղարաբաղյան համատեքստում եւ արդյոք ինչ-որ խթաններ կօգտագործվեն բանակցություններն առաջ մղելու համար, նաեւ ինչ է արվելու «Ադրբեջանի տարածքների օկուպացիայի հետ»:

Փոխխոսնակը նախ նշել է, որ տեղյակ չէ, թե հատկապես ինչ համատեքստում կարող էր նշված հարցը քննարկվել պետքարտուղարի Թուրքիա այցելությանը:

«Բայց վերահաստատում եմ, որ Միացյալ Նահանգները, որպես Մինսկի խմբի համանախագահող երկիր, խորապես հանձնառու է աշխատելու կողմերի հետ հասնելու հակամարտության խաղաղ կարգավորմանը», նշել է Վենթրելը: Նրա խոսքով` «հավատում ենք, որ ուժի գործադրումը չի լուծի հակամարտությունը, եւ մենք կոչ ենք անում կողմերին ձեռնպահ մնալ ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումից»:

Վ. Պ.

# Ինչպե՞ս են փոխվելու պետական բյուջեն եւ աշխատավարձերը մինչեւ 2025-ը

## *Զգուշավոր եւ իրատեսակա՞ն, թե՞ հավակնոտ, բայց իրագործելի*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013-ի Հայաստանի պետական բյուջեն պետք է գերազանցի 1 տրիլիոն դրամի սահմանը: Հիշեցնենք, որ անցյալ տարի կառավարության առջեւ խնդիր էր դրված լրացուցիչ 102 մլրդ դրամ եկամուտներ հավաքել, ինչին շատերը թերահավատորեն էին վերաբերվում: Այդուհանդերձ, այդ ծրագրային խնդիրը կատարվեց` ինչպես տնտեսական աճի, այնպես էլ հարկերի հավաքման ցուցանիշի ավելացման շնորհիվ: Իրականում 102 մլրդ դրամ լրացուցիչ հարկ հավաքելը թեթեւ առաջադրանքներից չէր իհարկե, բայց ասել, որ անհնարին էր, այդպես չէ: Համաշխարհային բանկի փորձագիտական գնահատմամբ` Հայաստանում լրացուցիչ 240 մլրդ դրամ հարկերի հավաքման ռեսուրսներ կան: Հետեւաբար, կարելի էր հարկերի հավաքման ավելի բարձր շեմի ձգտել: Հայաստանի Հանրապետության 2012-2025 թթ. հեռանկարային զարգացման ծրագրով, մասնավորապես, բյուջեի ավելացման ավելի բարձր ցուցանիշներ են նախատեսվում:

Եկող տարվա համար նախատեսվում է բյուջեի միայն հարկային եկամուտները հասցնել 1 տրլն 149 մլրդ դրամի, 2015-ի համար` 1 տրլն 287 մլրդ դրամի, 2016-ի համար` 1 տրլն 445 մլրդ դրամի, 2017-ի համար` 1 տրլն 624 մլրդ դրամի, 2021-ի համար` արդեն 2 տրլն 592 մլրդ դրամի եւ 2025-ին` 4 տրլն 142 մլրդ դրամի: Այսինքն, խնդիր է դրված առաջիկա 12 տարիներին միջին տարեկան հարկային եկամուտներն ավելացնել 250 մլրդ դրամով: Սա իսկապես դժվար իրագործելի խնդիր է եւ կարելի է ենթադրություններ անել, թե ինչպե՞ս կհաջողվի հաջորդ 12 տարիների Հայաստանի կառավարություններին լուծել դա: Մյուս կողմից էլ, սակայն, մեր երկրում բավականին ցածր է հարկեր-ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը եւ հրատապ է այդ ցուցանիշի արագ տեմպերով բարելավումը:

*Տես էջ 4*

# Երկու երդմնակալությունները եւ երեկոյան ցույցը

*1-ին էջից*

Ու միակ մտածումը որ ծնվում էր համեմատելիս, այն էր, որ մարզահամերգային համալիրում երդված նախագահը գուցե մի հրաշքով պետք է ներկա լիներ ու տեսներ այդ մարդկանց: Գուցե դրանից հետո անհնար լիներ, որ նա ասի, թե կարդինալ փոփոխություններ չի ուզում անել:

Ասենք, որ Րաֆֆի Հովհաննիսյանի ելույթն Ազատության հրապարակում որեւէ ծրագրային բովանդակություն չուներ, նույն էմոցիոնալ ելույթն էր, ինչ մինչեւ հիմա է եղել, նա «Րաֆֆի, նախագահ» կարգախոսը, որ հաճախ էր բղավում էին հանրահավաքավորները, շարունակում էր դառնալ «Հայաստան», իսկ հանրահավաքի մասնակիցների՝ բավական տեսանելի անհամբերությունը՝ «Հիմա, հիմա», Ր. Հովհաննիսյանի սրտով չէր ակնհայտորեն, նա խոսում էր անգամ ուրբաթօրյա հանրահավաքին անելիքի մասին եւ ասում էր, թե «երեկոյան 18-ին եկեք, կգնանք երթի»: Իսկ երբ անհամբերները չգնացին Ազատության հրապարակից, նա, որ հեռացել էր հանրահավաքից հետո, մի քանի րոպեից վերադարձավու նրանց տարավ երթի՝ Հյուսիսային պողոտայով, հրապարակով, Մաշտոցի պողոտայով՝ հակադրվելով հանրահավաքավորներին, թե Ինքը Բաղրամյան 26 չի առաջնորդելու, իրենք երթի կգնան Ծիծեռնակաբերդ: Ասենք, որ մոտ երեք տասնյակ հազար հանրահավաքավոր հավաքելն իրոք այսօր մեծ ռեսուրս է, բայց Րաֆֆին, փաստորեն, նրանց ոչինչ չառաջարկեց, վաղը, ուրբաթ օրը եւ հետագայում անելիքի մշուշոտ հեռանկարից բացի եւ ակնհայտորեն անիրականանալի բան ասելով կրկին, թե Սերժ Սարգսյանն ու Վեհափառը պետք է գան հրապարակ (երեկ երեկոյան) ու ներում խնդրեն կեղծ երդման համար: Բա երեսուն հազար մարդ հավաքած լիդերը նման անլուրջ բան ասո՞ւմ է:

Վերն ասվածը տողերիս հեղինակը գրել է մինչեւ Ր. Հովհաննիսյանի՝ ժամը 18-ին կրկին մեկնարկած հանրահավաքը, որտեղ նա երբ անընդհատ փորձում էր խոսել, թե վաղը ինչ պիտի անեն, հավաքվածները, որ առավոտյան հանրահավաք եկածներից ավելի քիչ էին, բղավում էին՝ «հիմա, հիմա»: Անգամ՝ բղավում էին, թե եթե ինքը չի կարող գնալ եւ ազատել ոստիկանության կողմից երեկ բերման ենթարկված մի քանի ակտիվիստին, իրենք կգնան ու կազատեն. Ր. Հովհաննիսյանն մինչ այդ դիմել էր իրավապահներին, թե՝ «ազատեք Մարիամ Սուխուդյանին եւ մյուս ակտիվիստներին»:

Ու անգամ սկսեցին սուլել Ր. Հովհաննիսյանին: Վերջացավ նրանով, որ Ր. Հովհաննիսյանն ասաց՝ ընդունում է «հիման», ու Բաղրամյան պողոտայով կգնան Ծիծեռնակաբերդ՝ մոմավառության: Ու անգամ մոմեր բաժանվեցին: Ժողովուրդը խառնիխուռն լցվեց փողոց, ու այլեւս ոչ մի կարգ չպահպանելով ուղղվեց դեպի Բաղրամյան պողոտա: Ինչպես եւ սպասելի էր՝ նրանց դիմավորեց ոստիկանությունը՝ մահակներով եւ գլխադիրներով, ըստ նշանակության ջոկատներով մի քանի շերտ պատնեշ կազմած: Ոստիկանության բարձրաստիճան Ներսես Նազարյանը ցուցարարներին զգուշացրեց, որ երթն անօրինական է, իրենք ստիպված կլինեն միջոցների դիմել՝ կասեցնելու երթը: Ր. Հովհաննիսյանն ասաց երթուղին, թե՝ գնում են Ծիծեռնակաբերդ, անգամ ասաց, թե լուռ կգնան, եթե Նազարյանն իրեն ձերբակալի՝ ինչ արած: Ու այդ պահին սկսվեց հրմշտոց, անգամ ծեծկռտոց, օրինակ՝ ինձ մոտիկ մի տղայի ձեռքերը ոլորեցին, ու գետնաքարշ տանում էին ոստիկանները, բայց չհասկացվեց՝ տանում են հեռու, թե ձերբակալում են: Մի քանիսն անգամ ճեղքեցին ոստիկանական առաջին պատնեշը, դա գրողների տան մոտ էր, գործի դրվեցին մահակներ, եւ մինի բախում եղավ: Մի պահ անց եկավ ոստիկանապետ Վովա Գասպարյանը, որի հետ Րաֆֆի Հովհաննիսյանը սկսեց խոսել: Ղեկավարներից Ռուբեն Հակոբյանը զգուշացնում էր ցուցարարներին՝ սադրանքների մեջ չներքաշվել:

Ցուցարարներից մի քանիսի պատմելով՝ Արմեն Մարտիրոսյանին եւս հարվածներ են բաժին ընկել, նրան ոստիկաններն իբր տարել էին: Իմ ներկայությամբ զանգում էին Արմեն Մարտիրոսյանին՝ նրա հեռախոսը չէր պատասխանում: Մի քանի պահ անց ղեկավարներից արդեն ոչ ոք տեսանելի չէր, ցուցարարները միմյանց տարբեր չստուգված տեղեկություններ էին փոխանցում: Մեկն ասում էր՝ Րաֆֆի Հովհաննիսյանն ու Արմեն Մարտիրոսյանը Վովա Գասպարյանի հետ Սարյան փողոցում բանակցում են, մյուսն ասում էր՝ Ր. Հովհաննիսյանը գնացել է Սարյանով Ծիծեռնակաբերդ, մենք էլ պիտի գնանք: Ուրիշները կամուկաց էին՝ մինչեւ Րաֆֆին չգա ու իրենց ասի, իրենք ոչ մի տեղ չեն գնա: Անտեր մնացած ցուցարարների խումբը չգիտեր անելիքը:

Ցուցարարները պնդում էին, որ Արմեն Մարտիրոսյանին ոստիկանության բաժանմունք են տեղափոխել՝ առավոտյան միջադեպի համար: Ի դեպ, մենք դրա ականատեսը եղանք առավոտյան 10:30-ին, ավտոբուսի պատուհանից: Գյումրեցիների հետ նախագահի նստավայրի հատվածից անցնող Արմեն Մարտիրոսյանին մեր աչքի առաջ հարվածում եւ հրում էին ոստիկանները, ավելի ուշ նրանից տեղեկացանք, որ ոստիկանները երթով եկողների մեջ ներկա նրա մոր հանդեպ էին անհարգալից վարվել, եւ ինքը բորբոքվել էր: Ոստիկանությունը, ըստ լուրերի, ուժ է կիրառել նաեւ ակտիվիստներից Դավիթ Սանասարյանի հանդեպ:

Ուշ երեկոյան ոստիկանության հաղորդագրությունը տեղեկացնում էր, որ Արմեն Մարտիրոսյանը ոստիկանների «օրինական պահանջների չենթարկվելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելու նպատակով ոստիկանության Արաբկիրի բաժին է» տարվել եւ այնուհետեւ «ենթարկվել է պատշաճ բուժզննման», այդ թվում՝ «ռենտգեն հետազոտության» արդեն հիվանդանոցում:

Ոստիկանության ներկայացուցիչն արդեն 20:30-ի սահմաններում նորից զգուշացրեց ցուցարարներին՝ սթափվել, անօրինական ցույց չանել Բաղրամյան պողոտայում: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ, այնուամենայնիվ, Ր. Հովհաննիսյանն ու ցուցարարների մի մասը այլընտրանքային ճանապարհով երթով հասնում են Ծիծեռնակաբերդ:

Հավանաբար՝ դեպքերի զարգացումն այսօր կշարունակվի, սակայն մի բան կարելի է էս գլխից ասել. երբ հանրահավաքի ես հրավիրում մարդկանց՝ նրանց կյանքի, անվտանգության եւ գործողությունների պատասխանատուն դու ես՝ լիդերը, անկախ նրանից, թե ինչ են նրանք պահանջում, եւ անկախ նրանից՝ կլինե՞ն սադրիչներ, հրահրողներ, թե տարբեր ռանգի այլ մարդիկ: Ու Րաֆֆի Հովհաննիսյանի գործողություններում այս առումով հետեւողականություն չնկատեցինք՝ էս ժողովրդի վրա ընդդիմադիր լիդեր չի գալիս, էլի: Իսկ հանրահավաքում այլ օրեր ելույթ ունեցող բոցավառ հռետորաբաններներից շատերն այդպես էլ չերեւացին՝ անէացել էին երեկ, երեւի վտանգի հոտն առել էին:

***Հ. Գ. - Ավելի ուշ հայտնի դարձավ, որ երեկ բերման են ենթարկել Անդրիաս Ղուկասյանին եւ մի շարք այլ ակտիվիստների:***









# Թուրքիան զգուշացնում է Կանադային

Օտտավայից (Կանադա) Սարգիս Ասատուրյանը «Ազգին» տեղեկացնում է, որ The Canadian Press-ին տված հարցազրույցում այդ երկրում Թուրքիայի դեսպան Թունջայ Բաբալին հայտարարել է, որ օսմանյան թուրքերի կողմից հայերի սպանդը ցեղասպանություն որակելու վերաբերյալ վարչապետ Ստեֆան Հարփերի կառավարության որոշումը կարող է խոչընդոտել երկու երկրների միջեւ առեւտրային հետագա խոստումնալից հարաբերություններին: Բաբալին ասել է, որ 1-ին համաշխարհային պատերազմի ընթացքում մեկուկես միլիոն հայերի սպանդի վերաբերյալ Կանադայի դիրքորոշումը ցավ է պատճառում իր երկրին: Բայց դա չի նշանակում, որ Թուրքիան չի ցանկանում զարգացնել տնտեսական հարաբերությունները Կանադայի հետ: «Ես ճշմարիտ հավատացողն եմ մեր երկու երկրների ներուժին: Կանադան շատ բան ունի Թուրքիային առաջարկելու, Թուրքիան էլ՝ Կանադային: Չի կարող բնականոն հարաբերություն լինել՝ երկրներից մեկին ցեղասպանության մեջ մեղադրելով: Դա շատ լուրջ ենթադրություն է, որը պետք է ապացուցվի իրավականորեն, պատմականորեն», ասել է Բաբալին:

Երկու երկրների միջեւ ներկայիս առեւտրային հաշվեկշիռը 2,5 միլիարդ դոլար է, ինչը, Բաբալիի կարծիքով, հեռու է նրանց ներուժից: Թուրքիան նախատեսում է այդ թիվը առաջիկա 5 տարիների ընթացքում հասցնել 10-15 միլիարդ դոլարի: Թուրքիան ցանկանում է Կանադայի հետ ազատ առեւտրի խոսակցություններ ձեռնարկել: Սակայն ցեղասպանության խնդրի կապակցությամբ Անկարան Կանադայից դրական քայլերի է սպասում «այդ խնդիրը հետեւում թողնելու» ուղղությամբ: Դրական քայլերից մեկը, օրինակ, կարող է լինել Կանադայի արտգործնախարարի այցը Թուրքիա, «հուշել է» Թուրքիայի դեսպանը:

# Լազերային թնդանոթ ընդդեմ անօդաչու ինքնաթիռների



**Ամերիկյան ծովուժը 2014-ից նոր զինատեսակ՝ լազերային թնդանոթ կօգտագործի թշնամական անօդաչու ինքնաթիռների եւ ռազմանավերի դեմ: CBS News հեռուստաալիքը նշում է, որ լազերային թնդանոթները կայրեն թիրախները:**

**Դերծովակալ Մեթյու Քլանդերը, որը ԱՄՆ ծովուժի հետազոտական բաժնի ղեկավարն է, հայտնել է, որ լազերային զենքը կտեղակայվի Պարսից ծոցում գործող ռազմանավերի վրա, քանի որ այնտեղ իրանական անօդաչու ինքնաթիռները եւ ռազմանավերը երբեմն անհանգստացնում են ամերիկացիներին:**

**Նոր զենքը կարող է օգտագործվել ինչպես լրտեսական տեսախցիկի «կուրացման», այնպես էլ թիրախի ոչնչացման նպատակով: Ծովի ալեկոծությունը չի ազդում նշանառության ճշգրտության վրա: Ի դեպ, նոր զինատեսակի մշակման վրա ծախսվել է ընդամենը 40 մլն դոլար:**

**Ներկա պահին խոսքն այնպիսի զենքի մասին է, որը չի կարող ոչնչացնել թշնամու հրթիռները կամ ռեակտիվ օդանավերը: Մյուս սահմանափակումը կապված է վատ եղանակի հետ (մառախուղ, ուժեղ ամպամածություն եւ այլն):**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## Զատկի եւ Նովրուզի ընթացքում՝ «հարաբերական անդորր»

Ապրիլի 9-ին ոչ միայն պաշտոնական հայտարարությունների իրենց բաժինը հայաստանցիներին ներկայացրին Սերժ Սարգսյանն ու Րաֆֆի Հովհաննիսյանը, այլեւ հայտարարությամբ հանդես են եկել Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման բանակցություններում միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները։

Համանախագահներ Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ժակ Ֆորը (Ֆրանսիա) եւ Յան Քելլին (ԱՄՆ) Վիեննայում ապրիլի 9-ին նախ ԵԱՀԿ Մինսկի խմբի դեսպաններին ներկայացրել են մարտի 18-22-ը եւ ապրիլի 1-6-ը ղարաբաղյան խնդրի առնչությամբ կատարված աշխատանքները՝ տարածաշրջանային այցով ու քննարկումներով հանդերձ։

Փաստելով, որ մարտի 21-ին Երեւանում համանախագահները հանդիպել են Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին, իսկ ապրիլի 2-ին




Բաքվում քննարկումներ ունեցել նախագահ Ալիեւի եւ արտգործնախարար Մամեդյարովի հետ՝ համանախագահները ներկայացրել են նաեւ Լեռնային Ղարաբաղ երկու առանձին այցելությունները՝ մարտի 19-20-ին եւ ապրիլի 4-5-ին «հանդիպելով դե ֆակտո իշխանությունների հետ»։

Համանախագահները Մինսկի խմբի դեսպաններին ներկայացրել են «շփման գծի երկու կողմի իրավիճակը, երբ հատել են շփման գիծը երկու տեղում ապրիլի 4-ին եւ 5-ին»։ «Համանախագահները տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ քննարկել են շփման գծի երկու կողմում կյանքի որակն ու վերջին միջադեպերը», նշված է համանախագահների հայտարարության մեջ։

«Համանախագահները ընդգծել են շփման գծում հարաբերական անդորրը Նովրուզի եւ Զատկի ընթացքում եւ հույս հայտնել, որ այդ վիճակը կշարունակվի», ասվում է Մինսկի խմբի համանախագահների հայտարարությամբ։ Տեղեկացվում է նաեւ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ քննարկվել է նաեւ «դեպի Լեռնային Ղարաբաղի օդանավակայան եւ այնտեղից քաղաքացիական թռիչքների հարցը»։ Ըստ այդմ՝ «նախագահները վերահաստատել են իրենց հանձնառությունը խաղաղ գործընթացի առնչությամբ եւ աջակցություն են հայտնել ամենաբարձր մակարդակով ներգրավվածությանը»։

Համանախագահները ծրագրում են, ըստ իրենց իսկ հայտարարության, արտգործնախարարների հանդիպում կազմակերպել մոտակա շաբաթները՝ առաջ մղելու խաղաղ գործընթացը։

Վ. Պ.

## ՌԱԿ-ի «Նոր Օր» պաշտօնաթերթի հիմնադրութեան 90-ամեակի տօնակատարութիւնը

ՌԱԿ-ի Արեւմտեան շրջանի պաշտօնաթերթ «Նոր Օր»-ի հիմնադրութեան 90-ամեակին առիթով ՌԱԿ շրջանի ղեկավարութիւնը այլազան ձեռնարկներով նշեց եւ կը շարունակէ նշել թերթին նշանակալից այս տարեդարձը, մեր ուխտապահ շարքայիններուն, համակիրներուն, ընթերցողներուն եւ բարեկամներուն մասնակցութեամբ։

Այդ ձեռնարկներէն գլխաւորը կայացաւ մարտ 17-ի երեկոյեան, Հոլիվուդի «Տաղլեան» սրահին մէջ։ 90 տարին պատմութեան համար պարզապէս ակնթարթ մըն է, բայց թերթի մը համար երկար է, յատկապէս «Նոր Օր»ի ապրած խառն ու խրթին 90 տարիներուն համար, որոնք լեցուն էին նիւթական ու բարոյական դժուարին պահերով։ Այս տասնամեակներուն հայրենաբնակ եւ աշխարհասարած մեր ժողովուրդը հազար ու մէկ դժուարութիւններ դիմագրաւեց, եւ 90 տարի շարունակ «Նոր Օր» մեր ժողովուրդի լեռնակուտակ ցաւերուն ու դժուարութեանց դեղ ու դարման եղաւ։ Յոյսի աղբիւր եղաւ մեր ժողովուրդին համար, յատկապէս աշխարհակործան պատերազմներու տարիներուն, հայ սփիւռքին նայուածքը միշտ ուղղելով մեր յաւիտենական հայրենիքին՝ գեղանուն Հայաստանին, հոն ապրող մեր հրաշագործ ժողովուրդի հետ մշտատեւ կապի մէջ։

Ձեռնարկը կազմակերպուած էր մեր շրջանակի եւ լոսանջելըսահայ գաղութի ծանօթ գործիչներէն, «Նոր Օր»ի վաստակը մեծապէս գնահատող ազգայիններէ բաղկացած մարմնի մը կողմէ, նախագահութեամբ տիկին Սեսիլ Քեշիշեանի։ Համանախագահութիւնը ստանձնած էր ՌԱԿ-ի Կեդրոնական վարչութեան, ՀԲԸ Միութեան եւ ԹՄՄ-ի կեդրոնական վարչութեանց երկարամեայ նախկին ղեկավար, գիրքերու հեղինակ, հրապարակախօս, բժ. Գէորգ Քեշիշեան։




Ներկայ էին եւ գնահատագրեր յանձնեցին Լոս Անջելըսի եւ Գլենդէյլի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, «Նոր Օր»ի նախկին խմբագիրներ եւ այժմու խմբագիր Յակոբ Մարտիրոսեանը։ Այդ գիշեր իրենց ներկայութեամբ մեր շրջանակը շնորհաւորելու եկած էին Լոս Անջելըսի հայ մամուլի խմբագիրները, սոյն ձեռնարկի բարերարներն ու նուիրատուները, միութենական ներկայացուցիչներ եւ բարեկամներու բազմութիւն մը։ Ձեռնարկին հանդիսավարներն էին տիկին Սեսիլ Քեշիշեանը եւ ՌԱԿ-ի Կեդրոնական վարչութեան անդամ, «Նոր Օր»-ի վարչական մարմնի ատենապետ, յայտնի բժիշկ Րաֆֆի Պալեանը, որոնք փոխնիփոխ կատարեցին այդ պաշտօնը։

Տօնակատարութիւնը սկսաւ ամերիկեան, Հայաստանի եւ ՌԱԿ-ի օրհներգերով ու քայլերգով։ Ս. Յովհաննու- Կարապետ եկեղեցւոյ հովիւ Մանուկ քահանայ Մարգարեան կարդաց Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ.-ի օրհնութեան գիրը, որ յատկապէս ղրկուած էր այդ տօնակատարութեան առիթով։ Րաֆֆի Պալեանի եւ «Նոր Օր»-ի խմբագրական կազմի անդամ Հրաչ Սեփեթճեանի կողմէ պատրաստուած էին «Նոր Օր»-ի պատմութենէն առնուած պատառիկներ, որոնք սլայդներով ներկայացուեցան, մինչ անոնց մասին կը տրուէին կարճ բացատրութիւններ։

Ամբիոն հրաւիրուեցաւ օրուան գլխաւոր բանախօսը՝ Լոս Անջելըսի հայ մամուլի նահապետը՝ Օշին Քեշիշեան, որ 1970-էն ի վեր կը հրատարակէ իր՝ «The Armenian Observer» շաբաթաթերթը եւ միաժամանակ շրջան մը եղած է «Նոր Օր»-ի խմբագիրը։ Գլխաւոր բանախօսը, ինչպէս միշտ, այս անգամ ալ սքանչելի ելոյթով մը անդրադարձաւ հայ մամուլին ընդհանրապէս, տուաւ խիստ շահեկան տեղեկութիւններ, ապա ներկայացուց «Նոր Օր»ի ժամանակաշրջանը, անոր գաղափարախօսութիւնը ու մանաւանդ անոր վայելած ժողովրդականութեան բուն պատճառը։ ««Նոր Օր» բախտաւոր եղած է ունենալով լաւ խմբագիրներ, աշխատակիցներու պատկառելի անուններ, սկզբունքի տէր անձեր, որոնք թերթին մեծ որակ եւ արժէք տուած են», ըսաւ պրոֆ. Օշին Քեշիշեան։ Այնուհետեւ գնահատանքի արժանացան հինգ բարերար զոյգեր, որոնք 5000-ական դոլար նուիրած էին այդ գիշեր։ Ապա ջերմ եւ իմաստալից ելոյթ մը ունեցաւ ՌԱԿ Կեդր. վարչութեան ատենապետ Մայք Խարապեան, որ յուշատախտակով մը գնահատեց տէր եւ տիկին Քեշիշեանները։

Հանդիսավարները մերթ ընդ մերթ ողջունեցին ներկայ եղող միութենական ներկայացուցիչները։ Վերջաւորութեան նախկին խմբագիրներէն ոմանք եւ խմբագրական կազմի անդամները, գլխաւորութեամբ այժմու խմբագիր Յակոբ Մարտիրոսեանի, հատումը կատարեցին 90-ամեակի տարեդարձի կարկանդակին։ Վերջաւորութեան ելոյթ ունեցաւ թեմիս առաջնորդ՝ Յովնան արք. Տէրտէրեանը, որ ջերմ խօսքերով գնահատեց «Նոր Օր»ի 90 տարիներու վաստակը, որ «Հայելին եղած է մեր գաղութի գործունէութեան», ինչպէս նաեւ գնահատանքով յիշեց, թէ «Նոր Օր» միշտ հաւատարիմ եւ աջակից եղած է լուսոյ խորան Ս. Էջմիածնին։

Փակման խօսքով ելոյթ ունեցաւ թեմիս բազմավաստակ նախկին առաջնորդ՝ Վաչէ արք. Յովսէփեան, որ մեծապէս գնահատեց մեր թերթը։ ««Նոր Օր» դպրոց մը, համալսարան մը եղաւ մեր գաղութին համար, որուն ընթերցումով աւելի հայրենասէր եւ հոգեւոր կեանքով մը կը լեցուի ընթերցողը», ըսաւ Սրբազան հայրը, որուն «Պահպանիչ»ով ալ վերջ գտաւ այդ անմոռանալի ձեռնարկը։ Յիշենք, թէ պատրաստուած էր օրուան պատշաճ գրքոյկ մը, որուն մէջ դրուած էին շնորհաւորական նամակներ, գնահատանքի խօսքեր եւ նուիրատուութիւն կատարող ազգայիններուն անունները։

Նորանոր ամեակներ՝ մեր «Նոր Օր»ին։

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

*«**Ազգի**» խմբագրությունը 90-ամյակի առթիվ ջերմորեն շնորհավորում է* «Նոր Օր»ի *խմբագրական կազմի անդամներին, հեղինակներին եւ ընթերցողներին։*

### ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

## Խաչիկ Վարդանյան



**Այսօր կլրանար Ազգային անվտանգության ծառայության փոխգնդապետ Խաչիկ Հրաչիկի Վարդանյանի երկրային կյանքի 65-րդ տարեդարձը... Ժամանակը հաճախ մարդու որոշումներից առաջ է ընկնում, իր հետ ապագան դարձնում անցյալ. 10 տարի առաջ նա բռնեց հավերժի ճամփան՝ իրեն ճանաչողների հոգում թողնելով և՛ թախիծ, և՛ լուսավոր մի հետագիծ։**

**Նա իր գիտակցական ողջ կյանքը նվիրեց հայոց պետության ազգային անվտանգության ապահովման գործին՝ չհասցնելով անգամ անցնել վաստակած հանգստի...**

**Իր գործընկերների հիշողության մեջ նա ամփոփվեց որպես բարձրակարգ պատրաստվածությամբ եւ պատասխանատվությամբ մասնագետ, նրբազգաց ու հոգատար ընկեր, հարազատ ու սիրելի անձնավորություն։**

**Խաչիկ Վարդանյանն այն մարդկանցից էր, ովքեր ծնվում են իրենց շուրջը լույս ու ջերմություն սփռելու համար։ Ծնվել էր շռայլորեն ապրելու երկրի բախտով, իր ընտանիքի գրկում։ Նա միշտ մնաց բարի, մեծահոգի, որպես սիրառատ հայր ու ամուսին, անհիշաչար ու պարկեշտ ընկեր, կարողացավ ստեղծել գեղեցիկ, օրինակելի ընտանիք եւ ընկերական ներդաշնակ միջավայր։ Նրա ընտանիքում տիրում էր ազգային ավանդույթների, սիրո ու բարության մթնոլորտը։ Նա մի անեզր սիրով ու նվիրումով էր կապված իր ծննդավայրին՝ Վերնաշենին։**

**Նրա հետ մարդիկ իրենց միշտ ապահով ու պաշտպանված էին զգում։ Նրա ողջ կյանքն ընթացք էր հանուն ազնիվի ու ճշմարտության։ Ուժեղ ու հպարտ, կենսախինդ ու սիրված անձնավորություն էր։ Հասնում էր բոլորին, հասցնում ամեն ինչ։ Օժտված էր աշխատանքային եռանդով, մարդկանց օգնելու պատրաստակամությամբ, արժանապատվությամբ ու ներողամտությամբ։**

**Մարդն ինքը չի ընտրում իր ճակատագրի սահմանները։ Ճակատագրի որոշումներ կան, որոնք անհնարին է հասկանալ, ընդունել ու հաշտվել դրանց հետ, որովհետեւ դրանք իբրեւ իրականություն ընկալելու համար չափազանց անսպասելի են, անհավատալի ու դաժան։ Այդպիսին է նաեւ մահը ...**

**Այսօր արդեն նա հուշ է դարձել՝ իր գեղեցիկ ու հարուստ կենսագրությամբ։ Նրա երկրային բացակայությամբ չի ավարտվում իր կյանքի պատմությունը։ Նրա օրինակելի գոյակերպը շարունակում են ընտանիքի անդամները։**

**Թող օրհնյալ լինի քո ծննդյան 65-րդ տարեդարձը, մե՛ր թանկագին, որը, ավա՜ղ, լրացավ աշխարհիկ կյանքից 10 տարի անց եւ, թերեւս, նոր էջ է քո երկրային կյանքում։**

**Մեզ մնում է միայն աղոթել քեզ համար եւ շարունակ բարձրաձայնել՝ դու ապրում ես, դու կաս, թանկագին հայր, քանի որ կանք մենք, քեզ երախտապարտ քո ընտանիքը։**

# Բժշկական նոր ոճ «Մեփլ Լիֆս» հայ-կանադական կլինիկայում

«Մեփլ Լիֆս» հայ-կանադական բժշկական կլինիկան հիմնադրելու գաղափարը ձեւավորվել էր դեռեւս մի տարի առաջ, իսկ կյանքի կոչվեց շուրջ 5 ամիս առաջ:

«Մեփլ Լիֆսի» ղեկավար, բժշկական գիտությունների թեկնածու, MSc (Նիդեռլանդներ) Վարդգես Ավագյանը պատմում է, որ կլինիկան հիմնադրելու գաղափարը ծնվեց Կանադայում Հայաստանի դեսպան Արմեն Եգանյանին հանդիպելուց հետո: «Ոգեշնչված վերջինիս խորհուրդներից, որ նորից մտածեմ Հայաստանի մասին եւ Հայաստան բերեմ բժշկական արդիական տեխնոլոգիաներ, աշխատանքի նոր ոճ ու միջազգային ժամանակակից մոտեցումներ, որոշեցի գալ եւ հիմնել նոր ոճի կլինիկա», ասում է Վարդգես Ավագյանը, որը վերջին 15-17 տարիներին ապրել, սովորել եւ աշխատել է Հայաստանից դուրս՝ Միացյալ Նահանգներում, Հոլանդիայում, Անգլիայում, Կանադայում եւ այլն: Սակայն այժմ նա Հայաստանում է եւ իր հմտություններով բերել է այստեղ արտերկրյա աշխատանքային ոճ, որին ստորեւ կանդրադառնանք:

Մինչ «Մեփլ Լիֆսի» նորարարություններից խոսելը Վարդգես Ավագյանն ասում է՝ նախկինում էլ եղել են փորձեր իր գիտելիքները կիրառելու Հայաստանում: Ի վերջո, որոշել է կրկին գալ ու հիմնել «Մեփլ Լիֆս» կլինիկան», Նոր-Մարաշի Արմենակյան փողոցի թիվ 129 հասցեում:

«Մեփլ Լիֆսն» ամբողջությամբ աշխատում է կանադական բժշկական ուղեցույցներով: Ներսում բժշկական բոլոր ծրագրերը միմյանց եւ արտասահմանյան գրադարաններին միացված են էլեկտրոնային համակարգերով: «Իսկ բժիշկները հիմնվում են ինչպես իրենց գիտելիքների վրա, այնպես էլ հետեւում են կանադական ուղեցույցներին, որոնց վրա էլ հենց հիմնված է կլինիկայի աշխատանքը: Իհարկե, օգտագործել կարող ենք նաեւ եվրոպական մոտեցումները», հավելում է Վարդգես Ավագյանը:

«Մեփլ Լիֆսում» բուժաշխատողները ոչ թե զուտ խոսում են ապացուցողական բժշկության մասին, այլեւ կիրառում դա, եւ որեւէ մեկն իրավունք չունի նշանակելու որեւէ հետազոտություն, դեղամիջոց, որոնց անհրաժեշտությունն ապացուցողական բժշկությունը չի հաստատել: «Օրինակ՝ դեղատներում վաճառվում են շատ դեղամիջոցներ, որոնք հիմնված չեն ապացուցողական բժշկության վրա, հետեւաբար դրանք պետք չէ նշանակել հիվանդներին: Եվ ընդհանրապես, եթե բժիշկը հիվանդին նշանակում է բուժում կամ խորհուրդ տալիս մի բան, ապա նրա ասածը պետք է ապացուցված լինի գիտական ու վիճակագրական տվյալներով», ասում է բժիշկ Ավագյանը եւ լրացնում, որ ապացուցողական բժշկությունն ունի վերամշակված վիճակագրական լուրջ տվյալներ, որոնց հետեւում են բժիշկները:





*Բժիշկ Վարդգես Ավագյան*

### Ընտանեկան բժշկությունը «Մեփլ Լիֆսում»

Նորաբաց կլինիկան կազմված է հիմնականում ընտանեկան բժշկության հիմունքներով: Չնայած մեզանում ընտանեկան բժշկության ինստուտը ներդնելու փորձեր արվել են, ընդհուպ բացվել են ընտանեկան բժշկության ամբիոններ մասնագետների պատրաստելու համար, սակայն մեր ժողովուրդը դեռ լավ չի պատկերացնում, թե որն է ընտանեկան բժշկությունը, քանի որ ընտանեկան այն բժիշկը, որն աշխատում է պոլիկլինիկայում, գործնականում դեռ այնպիսին չէ, ինչպիսին պետք է լինի, եւ խոսքը չի վերաբերում անունին կամ համապատասխան դիպլոմին:

«Մեփլ Լիֆսում» ընտանեկան բժիշկը, սակայն, աշխատում է այլ մոտեցումներով եւ կատարում է առաջին շերտի բոլոր ստուգումներն ու բուժումները: Ընտանեկան բժշկի հետ միաժամանակ աշխատում են կլինիկայի գինեկոլոգները, ուրոլոգները, սոնոգրաֆիստները, լաբորատորիայի բժիշկները, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրված բժիշկ-խորհրդատուները:

«Ու եթե մեզ չեն բավականացնում տեղում ունեցած մեր գիտելիքներն ու խորհրդատվությունը, ապա կարողանում ենք տվյալները տեղափոխել Կանադա կամ Գերմանիա ու կարծիք ստանալ նաեւ այնտեղի մասնագետներից: Եվ այս ամենն ընդհանրացնելուց հետո ախտորոշում ենք ու նշանակում բուժումը», ավելացնում է բժիշկ Ավագյանը: Ինչպես նշվեց, «Մեփլ Լիֆսը» համագործակցում է նաեւ Կանադայի ու Գերմանիայի բուժհիմնարկների հետ:

Կլինիկայում ընտանեկան բժիշկն առաջին իսկ օրից հետեւում է հիվանդի առողջությանը ընդհուպ հիվանդի բուժումը ու դրանից հետո եւս պահպանում կապը հիվանդի հետ:

Իսկ շեշտված ուղղությունները կլինիկայում ուրոլոգիան ու գինեկոլոգիան են, եւ ներսում ձեւավորված է բուժաշխատողների թիմ, այսինքն՝ ամեն մեկն աշխատում է ոչ թե առանձին, այլ թիմում, եւ միասին են վերլուծում հիվանդի խնդիրները:

### Նորարար տեխնոլոգիաներն ու սոցիալական փաթեթը

Կլինիկայում օգտագործվում են բժշկական այնպիսի սարքավորումներ, որոնք Հայաստանում հազվագյուտ են, եւ «Մեփլ Լիֆսը» մեկն է այն կլինիկաներից, որ ունեն դրանք:

Օրինակ՝«Մեփլ Լիֆսի» բիոֆիդբեկ սարքը Հայաստանում ու թերեւս մեր տարածաշրջանում միակն է: Բիոֆիդբեկի օգնությամբ հիվանդը անցնում է բուժում հատուկ համակարգչային ծրագրով: Բիոֆիդբեկը կարգավորում է կոնքի խոռոչի օրգանների, աղիների, միզապարկի աշխատանքը անմիզապահությունների, դիսֆունկցիաների ժամանակ եւ օգտագործվում է անկախ հիվանդի սեռից ու տարիքից: Հիվանդը, գտնվելով համակարգչից որոշակի հեռավորության վրա եւ աշխատեցնելով մարմնի համապատասխան մկանները, խաղում է մասնագիտացված համակարգչային խաղերը, եւ այս կերպ ենթագիտակցաբար ստեղծում հետադարձ կապ կոնքի խոռոչի օրգանների եւ կենտրոնական նյարդային համակարգի կենտրոնների միջեւ: Բիոֆիդբեկը տալիս է հնարավորություն կարգավորելու օրգանիզմի համապատասխան ֆունկցիաների խանգարումները: Իսկ համակարգչային մասնագիտացած ծրագրերը (խաղերը) ընտրվում են կախված հիվանդությունից: Բոլոր այս նոր տեխնոլոգիաների առավելությունը նաեւ այն է, որ հիվանդը հաճախ կարողանում է խուսափել դեղորայքային եւ վիրաբուժական բուժումից:

«Մեփլ Լիֆսը» ունի նաեւ արդի սոնոգրաֆիկ ծառայություններ եւ իրականացնում է կլինիկական ու կենսաքիմիական լաբորատոր անալիզներ: Իսկ կլինիկայի մասնագետները, որոնք շատ վարժ օգտագործում են նոր տեխնոլոգիաները, վերապատրաստվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Առաջիկայում էլ մեկնելու են Կանադա կրկին վերապատրաստվելու:

Ինչ վերաբերում է ծառայության գներին, Վարդգես Ավագյանը նշում է, որ «Մեփլ Լիֆսի» ծառայությունների գնացուցակը գրեթե նույնն է, ինչ մյուս կլինիկաներինը. «Մեզ մոտ գրեթե նույն շուկայական գներն են, եթե ոչ ավելի մատչելի»:



*Ռադիոլոգ Կարինե Մկրտչյանը աշխատում է ուլտրաձայնային ախտորոշման սարքավորումով*

«Մեփլ Լիֆսը» առաջարկում է նաեւ սոցիալական փաթեթ, որը կարող է ներառել շուրջ 1000 հոգու: Ընդգրկվելով այս փաթեթում՝ մարդիկ ամսական վճարում են ընդամենը 5000 դրամ, եւ ողջ տարվա ընթացքում անսահմանափակ չափով օգտվում են կլինիկայի բոլոր ծառայություններից:

Եվ կլինիկայում ամենակարեւորն այն է, որ յուրաքանչյուր հիվանդին ցուցաբերվում է հոգատար վերաբերմունք ինչպես բուժման ընթացքում, այնպես էլ բուժումից հետո. կլինիկայի աշխատակիցները հիվանդների հետ կապ են պահպանում ու հետեւում նրանց առողջությանը նաեւ բուժումից հետո, կատարում են պլանային պրոֆիլակտիկ բուժմիջոցառումներ եւ հասանելի են օրվա 24 ժամերին:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Ինչպե՞ս են փոխվելու պետական բյուջեն եւ աշխատավարձերը մինչեւ 2025-ը

*1-ին էջից*

Առաջիկա նույն տարիների համար ծրագրվում է հարկային եկամուտների միջին տարեկան 0,3-0,4 տոկոսային կետի աճ ՀՆԱ նկատմամբ: 2013-ին այդ ցուցանիշը պետք է կազմի 22,3 տոկոս, եկող տարի՝ 23 տոկոս: Այսպես շարունակվելով, ծրագրվում է 2025-ին հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 27,1 տոկոսի: Ներկայիս համեմատությամբ սա իսկապես նկատելի առաջընթաց կլինի:

Միեւնույն ժամանակ, Արեւելյան Եվրոպայի երկրներում այս ցուցանիշը հիմա արդեն իսկ գտնվում է 25-30 տոկոսի միջակայքում, իսկ առավել բարեկեցիկ եւ զարգացած արեւմտաեվրոպական երկրներում 35 տոկոսից էլ բարձր է: Սա նշանակում է՝ այս երկրներում եկամուտներն ավելի լավ են հավաքվում, եկամուտների վերաբաշխումն ավելի արդար է կատարվում, սոցիալական բեւեռացումը շատ փոքր է եւ բարեկեցության մակարդակն ավելի բարձր: Գուցե այս դեպքում եւս երկարաժամկետ զարգացման ծրագրով փորձ կատարվի ավելի հավակնոտ խնդիր դնել եւ փորձել կատարել: Օրինակ՝ 27 տոկոսի փոխարեն 2025-ին հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել գոնե 30 տոկոսի: Հասկապես նկատի ունենալով, թե աշխատավարձերի բարձրացման ինչ քաղաքականություն է որդեգրվելու առաջիկա 12 տարիներին, ստվերի նվազման միջոցով հարկերի հավաքման ավելի բարձր տեմպեր են անհրաժեշտ լինելու:

2014-ից հետո 2012-2025 թթ. ծրագրով յուրաքանչյուր տարի կառավարությունը պարտավորվում է ապահովել հանրային կառավարման եւ դատաիրավական համակարգի աշխատողների առնվազն 10 տոկոս աճ, որը պետք է գերազանցի տնտեսության մեջ միջին աշխատավարձի աճի տեմպը: Ի դեպ, նույն փաստաթղթով, 2014-ին նախատեսվում է պետական ծառայողների աշխատավարձերի 50 տոկոս աճ 2012-ի նկատմամբ: Գուցե դրա մեջ ընդգրկված է նախագահի վերջին հեռուստաելույթում խոստացված աշխատավարձերի աճն այս տարվա հուլիսի 1-ի՞ց:

Ամեն դեպքում, պետական ծառայողների աշխատավարձերը նախատեսվում է մեկ այլ համամասնություն, որն, ըստ ծրագրի հեղինակների, բնորոշ է այս ոլորտում Եվրոմիության երկրներում առկա իրավիճակին: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի եւ պետական ծառայողների միջին տարեկան աշխատավարձերի հարաբերակցությունը կլինի 0,6-0,8-ի սահմաններում: Կառավարությունը առաջարկություն կներկայացնի պետական ծառայության տարբեր ոլորտներում աշխատավարձերի սանդղակների միասնականության ներդրման, պետական ծառայության տարբեր աստիճանների եւ բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերի միջեւ օպտիմալ հարաբերակցության սահմանման համար:

Այսպես թե այնպես, ակնհայտ է, որ հարկային եկամուտների հավաքման եւ պետական աշխատավարձերի բարձրացման փոխկապակցվածությունը պետք է պահպանել: Ավելին, վերջինիս արդյունավետ իրագործման համար հարկեր-ՀՆԱ հարաբերակցության մեջ հարկերի ծավալի ավելացման կարիքը թերեւս կզգացվի: Այսինքն, այս դեպքում եւս կառավարության առաջիկա ծրագրերը կարելի է բնորոշել որպես իրատեսական եւ զգուշավոր, բայց չէր խանգարի, որ դրանք դառնային հավակնոտ, բայց իրագործելի:

# Հայատյացությունը թուրքական իրականության առանձնահատկությունն է

## Սակայն Թուրքիայում ատելությունից չեն խուսափում նաեւ ոչ թուրք մահմեդականները

Որքան էլ հայատյացությունը լինի թուրքական իրականության առանձնահատկությունը, ատելությունից չեն խուսափում մյուս քրիստոնյաները, հրեաները, նույնիսկ ոչ թուրք մահմեդականները, ինչպիսիք են սուննի լազերն ու քրդերը: Ընդ որում ատելության այդ ձեւը չի համարվում ռասիզմ, քանի որ դրսեւորվում է մարդկանց ոչ թե հասարակական, այլ դավանանքային միավորման՝ «ումմաթի» շրջանակում:

Դիլա Քարամը «Խտրականության բառարանում» քննության է առել սուննի մահմեդական համայնքի այդ արատը, որի հոդվածը ապրիլի 8-ի համարում արտատպել է «Ռադիկալ» թերթը: Ահա թե ինչ է գրել.

«Ինչի մասին է հուշում «գյավուր» բառը: Դա սովորական ածակա՞ն է, անվնաս բնութագրո՞ւմ, իրավիճակի գնահատո՞ւմ կամ հալվա, թռչուն, ծաղիկ, թե՞ ինքնաթիռ... Վերջապես ի՞նչ: Ձեր կարծիքով ո՞րն է բանաստեղծի «այսօր կիրակի է, գյավուրների կատղելու օրը» խոսքերի իմաստը: Կամ ինչպես հասկանալ «գյավուրի մեռել», «գյավուրի վաստակ», «գյավուրի ծնունդ» արտահայտությունները: Քանի որ մենք ռասիզմի հետ բացարձակ առնչություն չունենք, հետեւաբար չենք իմանում այս արտահայտությունների իմաստը: Նույնիսկ կարող ենք հետեւյալ կերպ մտածել. «Գյավուր ասելիս որեւէ ցեղի անուն չտալու պատճառով չենք նսեմացնում ազգերից ոչ մեկին, ուստի ռասայական խտրականություն դրսեւորել չենք կարող»:

Միանգամայն հնարավոր է, սակայն գյավուրի փոխարեն եթե ասելու լինենք քուրդ, հայ կամ հույն, այդ դեպքում մենք արդեն ծայրահեղ ռասայականություն այնուամենայնիվ կդրսեւորենք: Կարծում եմ՝ բոլորը համամիտ կլինեն ինձ հետ: Եթե այդպես է, եկեք հիշենք մեր ասացվածքները.

*«Գնչուն նվագում՝ քուրդը պարում է»,*
*«Փայտից՝ ունելի, քրդից փեսա չի լինի»,*
*«Իշուն ասել են՝ քուրդ ես, երկու շաբաթ խոտ չի կերել»,*
*«Պտտվել հայի լապտերի պես»,*
*«Լազը քրդի ծով տեսած տարբերակն է»,*
*«Դրուզ»:*

«Դրուզ» էթնոնիմը որպես հայհոյանք ուշագրավ է: Ազգայնամոլները հաճախ են օգտագործում, թեեւ բռնելու տեղ չունեն: Խնդիրը հետեւյալն է՝ վերոհիշյալ բանաստեղծությունը ինչ էլ որ արտահայտի, ահավոր ռասիզմ է պարունակում, եւ ոչ ոք չի հարցնում. «Ինչո՞ւ եք վիրավորում դրուզներին»:

Իմ կարծիքով, այս ամենի իմաստը ռասիզմը «ումմաթի» շնորհիվ մաքրազարդելն է: Չէ՞ որ «ռասիզմը շատ վատ, անիծյալ բան է, իսկ համայնքայնությունը բոլորովին այլ բան, ինչպիսի հոգատարության է ընդգրկում նույն դավանանքի մարդկանց եւ առանց հաշվի առնելու ազգային պատկանելությունն ու լեզուն, միավորում նրանց»: Այսպես մտածողները միաժամանակ ասում են. «Քուրդը գյավուրի համեմատ է մահմեդական»: Ըստ սրանց. «Լիարժեք մահմեդական չէ, բայց եւ այնպես գյավուրից ավելի լավ է: Գյավուր լինելն ահավոր է: Չէ, մենք ռասիստ չենք, մենք «ումմաթ» ենք: Մահմեդականը լավ է, իսկ ոչ մահմեդականը՝ անպետք: Սակայն սուննի մահմեդականն է լավը՝ մնացածը՝ հեքիաթ: Մահմեդականը չի կարող հավասար լինել ոչ մահմեդականի հետ, որովհետեւ առաջնային է, քանի դեռ ոչ մահմեդականը հնազանդվում ու գլուխ է խոնարհում մահմեդականի առջեւ, աշխարհը կմնա անվտանգ: Համատեղ գոյակցությունը հնարավոր է այն դեպքում միայն, եթե ոչ մահմեդականը ենթարկվի մահմեդականին: Քանի որ մահմեդականները երկրպագում են ալլահին, ոչ մահմեդականներն էլ պիտի երկրպագեն սատանային: Բայց մենք ռասիստ չենք; Ի՞նչ ռասիստ: «Ումմաթ» ենք, իսկ դա առանց խտրականության գրկում է բոլորին»:

Այս տողերը կարդալուց հետո ակամա մտածում ես, մի՞թե սրանք ռասիզմի դրսեւորում չեն կրոնի միջոցով: Օրինակ, «հեռու սեղանից՝ հույն է», «շեկ հրեա» ասելու նման: Այսինքն ցեղը կրոնով փոխարինելու դեպքում կարծես ստորացումն ու վիրավորանքը դադարում են այդպիսին լինելուց: Այսպիսով մաքուր էջ է բացվո՞ւմ, թե՞ իրականում դրսեւորվում է ռասիզմի կրոնով համեմված ավելի ընդգրկուն տարբերակը: Մի ռասիզմ, որն իր օրինականությունը երկնքից է ստանում»:

Հ. Չ.

# «Հայերը թուրքական պետության դեմ են գործում եւ մտածում թուրք ազգից վրեժ լուծելու մասին»

## Հայտարարում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավորը

«**Ազգի**» էջերում թուրքական իրականության առանձնահատկություն հայատյացության դրսեւորումներին անդրադառնալիս բազմիցս գրել ենք, որ հայատյացությունը անասնական բնազդ է դարձել մարդասպան թուրք հրոսակի համար: Այդպիսի եզրակացության հիմքը թուրքական էլեկտրոնային եւ տպագիր մամուլի հրապարակումներն են, այլ ոչ թե հրոսակին վիրավորելու մեր ցանկությունը: Ընդ որում, հրոսակի պարագայում խոսքը սոսկ փողոցային խուժանին չի վերաբերում, որովհետեւ հայատյացության անասնական բնազդով առնվազն խուժանի չափ տառապում են նաեւ թուրք քաղաքական գործիչները:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ internethaber.com-ի ապրիլի 6-ի հրապարակմանը, որտեղ կայքէջը մեջբերում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Ահմեդ Դուրան Բուլութի հայտարարությունները, որը նա արել է Բալըքեսիր քաղաքում, մասնակցելով «գորշ գայլերի» առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի մահվան տարելիցի առթիվ կազմակերպված միջոցառմանը:

Լրագրողները պատգամավոր Բուլութից կարծիք են հարցնում PKK-ի առաջնորդ Օջալանի հետ բանակցություններից հետո թուրք-քրդական հաշտեցմանը նպաստելու համար իշխանությունների նախաձեռնությամբ կազմավորված «իմաստուն գործիչների» ցանկում ընդգրկվածների մասին: Նա թուրք հասարակության մեջ որոշակի դիրք ունեցող արվեստի, գրականության, գիտության եւ մշակույթի հանրահայտ գործիչներին նախ անվանում է «կեղտոտ մարդիկ», ապա ասում է, որ նրանք գործիք են դառնում երկրի աղտոտման ու մասնատման նկրտումներին, խորթնում թուրքական ինքնությունից եւ նրանցից շատերի ցեղը արատավոր է:

Այնուհետեւ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավորը շարունակում է. «Այս ցանկում կան նաեւ հայեր: Սրանք էլ իմաստուն գործիչ են: Սիրեմ իմաստությունդ: Հայի խելքը ինձ պետք չէ: Ի՞նչ կարող է նախատեսել հայը թուրք ազգի համար: Թուրքիայում ունենք հայ քաղաքացիներ: Ես նրանց հարգում եւ սիրում եմ: Սակայն մի՞թե կարելի է «իմաստուն գործիչների» հանձնաժողովում ընտրել նրանց, ովքեր մինչեւ վերջերս թուրքական պետության դեմ էին գործում եւ մտածում թուրք ազգից վրեժ լուծելու մասին»:

Ի դեպ «իմաստուն գործիչների» մեջ հայ հայտնաբերող Ահմեդ Դուրան Բուլութը որեւէ հայի անուն չի տալիս, ըստ երեւույթին նրա այդ հայտնագործությունը հանձնաժողովին վարկաբեկելու նպատակ է հետապնդում, քանի որ «հայ» արտահայտությունը Թուրքիայում համազոր է հայհոյանքի:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ուրանի հարստացման նոր գործարան Իրանում

Իրանի պետական հեռուստատեսությունը ապրիլի 9-ին հաղորդեց, որ Արդականում աշխատանքն է սկսել ուրանի ենթաօքսիդի (U308) արտադրության նոր գործարանը, իսկ Սագանդում սկսվել է ուրանի արդյունահանումը երկու նոր հորաններից:

Այդ բոլոր օբյեկտները գտնվում են երկրի կենտրոնական մասում՝ Յազդի նահանգում:

Պաշտոնական Թեհրանը հայտարարում է, որ մտադիր չէ կրճատել կամ դադարեցնել խաղաղ բնույթ կրող իր միջուկային ծրագիրը:

Նախօրեին Իրանի խորհրդարանի ազգային անվտանգության հանձնաժողովի մամլո քարտուղար Սայեդ Հոսեյն Նակավին հայտարարել էր, որ երկրի ներկայացուցիչները ոչ մի պարագայում չեն քննարկի միջուկային մշակումների մշտական կամ ժամանակավոր դադարեցման առաջարկությունները: Նակավիի խոսքերով՝ ներկա փուլում Իրանը պատրաստ է բանակցել ուրանի հարստացման մակարդակի շուրջը:



# Ստորագրահավաք հանուն Մոլդովայի եւ Ռումինիայի միավորման




Մոլդովայում եւ Ռումինիայում ստորագրահավաքներ կանցկացվեն հանուն երկու երկրների վերամիավորման: «Ռեգնում» գործակալությունը նշում է, որ կազմակերպիչը վերամիավորման ջատագով կազմակերպություններին միավորող Actiunea-2012 շարժումն է:

Նախատեսվում է հավաքել առնվազն 200 հազար ստորագրություն, ապա Ռումինիայում նախաձեռնել օրինագիծ, որը կդյուրացնի այցագրերի հանձնումը Մոլդովայի քաղաքացիներին եւ նրանց Ռումինիայի քաղաքացիության շնորհումը:

Actiunea-2012-ը նաեւ մտադիր է աշնանը Ռումինիայում կայանալիք սահմանադրական բարեփոխման շրջանակներում հասնել այն բանին, որ սահմանադրության ուղղումներից մեկը ամրագրի երկու երկրների վերամիավորման հնարավորությունը:

Մոլդովայի իշխանատեսության մասը կազմած Բեսարաբիան 19-րդ դարի սկզբներին միացվել էր Ռուսական կայսրությանը: Ավելի ուշ՝ 20-րդ դարի սկզբներին, տարածաշրջան էին մտել ռումինական զորքեր, իսկ Բեսարաբիայի խորհրդարանը քվեարկել էր Ռումինիային միանալու օգտին: Տարածաշրջանը Ռումինիայի կազմում մնաց մինչեւ 1940 թվականը (խորհրդային կառավարությունը դա համարում էր օկուպացում): 1940-ին Գերմանիայի հետ չհարձակվելու եւ Արեւելյան Եվրոպայում ազդեցության ոլորտները սահմանազատելու համաձայնագրի կնքումից հետո (Բեսարաբիան հայտնվեց ԽՍՀՄ շահերի ոլորտում) խորհրդային իշխանությունները վերականգնեցին Բեսարաբիայի վերահսկողությունը: Այդ տարածքում կազմավորվեց Մոլդովական ԽՍՀ-ն:

Ռումինիայի հետ Մոլդովայի վերամիավորման շարժումն աշխուժացավ 1980-ականների վերջերին, բայց միավորումը չկայացավ: Ներկայումս Մոլդովայի բնակչության մեջ վերամիավորման կոչերը, ըստ «Ռեգնումի», այնքան էլ լայն արձագանք չեն գտնում:

# Սիրիան չընդունեց ՄԱԿ-ի «քիմիական» հանձնաժողովին

Սիրիայի իշխանությունները չեն թույլատրել, որ երկիր մուտք գործի ՄԱԿ-ի այն հանձնաժողովը, որն ուզում է ստուգել ներքին հակամարտության ընթացքում քիմիական զենքի օգտագործման փաստերը: Այդ մասին հաղորդում է SANA գործակալությունը՝ վկայակոչելով Սիրիայի ԱԳՆ հայտարարությունը:

Դամասկոսի դժգոհությունը պայմանավորված է նրանով, որ ՄԱԿ-ի փորձագետներն ուզում են աշխատանք կատարել երկրի ամբողջ տարածքում, մինչդեռ իշխանությունները խնդրել էին քննել Հալեպի արվարձանում մարտի 19-ին պատահած միջադեպը: Սիրիայի կառավարության տվյալներով՝ այնտեղ ընդդիմության մարտիկների գործադրած քիմիական զենքից սպանվել էր 25 մարդ: Ընդդիմությունը իր հերթին պնդում է, թե քիմիական զենք օգտագործել են կառավարական զորքերը:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը 2013-ի մարտի վերջերին հայտարարել էր, որ կազմակերպությունը քննություն կանցկացնի, որպեսզի պարզի, թե կողմերից որ մեկն է օգտագործել քիմիական զենք:

2012-ի վերջերին ԱՄՆ-ը սպառնացել էր միջամտել Սիրիայի հակամարտությանը, եթե դրա ընթացքում քիմիական զենք գործադրվի:

# Չեռնոգորիայի նախագահը դարձյալ վերընտրվել է



Չեռնոգորիայի նախագահ Ֆիլիպ Վույանովիչը 3-րդ ժամկետով ընտրվել է նույն պաշտոնում: Բոլոր քվեների հաշվարկից հետո Պետական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների համաձայն, Վույանովիչը ստացել է քվեների 51,2 տոկոսը, նրա մրցակից Միոդրագ Լեկիչը՝ 48,8 տոկոսը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Հանձնաժողովի տվյալներով՝ քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 511 հազար անձանց 63,9 տոկոսը:

Ֆիլիպ Վույանովիչը Սոցիալիստների դեմոկրատական կուսակցության թեկնածուն է, Միոդրագ Լեկիչը ներկայացնում է Դեմոկրատական ճակատը:

640 հազարանոց Չեռնոգորիայի նախագահը ընտրվում է 5 տարով եւ կատարում առավելապես արարողակարգային պարտականություններ, մինչդեռ հիմնական իշխանությունը պատկանում է վարչապետին: Նախագահական ընտրություններում ընդդիմության թեկնածուի հաղթանակի դեպքում երկրի իրադրությունը թերեւս ապակայունանար, քանի որ խորհրդարանում մեծամասնություն են կազմում եվրոպամետ վարչապետ Միլո Ջուկանովիչի Սոցիալիստների դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչները:

# Մարզական

## Լեւոն Արոնյան. «Սվիդլերից կրած պարտությունը ճակատագրական եղավ»

***Լոնդոնում անցկացված շախմատի աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդների մրցաշարի ավարտից հետո Լեւոն Արոնյանը հարցազրույց է ունեցել «Էխո» թերթի թղթակցի հետ, որը ներկայացնում ենք «Ազգի» ընթերցողներին։***

**- Հաշվի առնելով, որ հավակնորդների մրցաշարում առաջին տեղը չգրավեցիր, կարելի է փաստել, որ այն քեզ համար անհաջող էր:**

- Այո, ճիշտ եք: Ինձ համար գլխավորն առաջին տեղը զբաղեցնելն էր, ինչն ինձ չհաջողվեց:

**- Քեզ համար մրցաշարում ե՞րբ սկսեց շրջադարձային պահը:**

- Առաջին տեղի համար մղվող պայքարում նման պահերը շատ էին: Սակայն ինձ համար վճռորոշ եղավ Պյոտր Սվիդլերից կրած պարտությունը: Այդ պարտիայում սարսափելի վատ խաղացի ու դրանից հետո թեւաթափ եղա եւ շատ դժգոհ եմ իմ ելույթից:

**- Ստացվում է, որ Բորիս Գելֆանդից մրցաշարում կրած առաջին պարտությունը քո հոգեվիճակի վրա առանձնապես չազդե՞ց:**

- Ոչ: Իհարկե, հաճելի չէր պարտվելը, սակայն շատ շուտ վերագտա խաղս ու հաջորդ պարտիայում հաղթեցի: Իսկ ահա Սվիդլերից կրած պարտությունն ինձ համար ճակատագրական եղավ: Հասկացա, որ այլեւս առաջին տեղի համար պայքարել չեմ կարող:

**- Շատ փորձագետներ վերլուծելով քո ելույթը, պնդում են, որ չդիմացար մրցաշարի լարվածությանը:**

- Ինձ թվում է, որ մեծ հաշվով նրանք իրավացի են: Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել ֆիզիկական եւ հոգեբանական պատրաստվածությանը:

**- Թեեւ մրցաշարի մեկնարկից առաջ Մագնուս Կառլսենը համարվում էր հաղթողի գլխավոր հավակնորդը, սակայն նրան չհաջողվեց զգալի առավելության հասնել մրցակիցների նկատմամբ:**

- Լոնդոնի մրցաշարը շատ ուժեղ կազմ էր հավաքել: Շախմատիստներից յուրաքանչյուրը կարող էր առանձին պարտիայում հաղթել Կառլսենին կամ մյուս մասնակիցներին: Օրինակ, Թեյմուր Ռաջաբովը առաջին շրջանում քիչ էր մնացել հաղթեր Կառլսենին: Մասնակիցների կազմը շատ հավասար էր: Դրա վկայությունն էին ավարտական տուրում Կառլսենի եւ Կրամնիկի կրած պարտությունները: Յուրաքանչյուր շախմատիստ, որը կարող էր ազդել մրցաշարային աղյուսակի վերին հորիզոնականներում մասնակիցների վերջնական դասավորության վրա, աշխատում էր իրեն լավագույն կողմերով դրսեւորել:

**- Շա՞տ սխալեցիր, որ չկարողացար հաղթող ճանաչվել:**

- Իհարկե: Սակայն Լոնդոնում ցույց տված խաղով արժանի չէի հաղթողի կոչմանը: Ընդհանուր առմամբ անհաջող խաղացի: Ճիշտ է, առաջին շրջանում վատ հանդես չեկա: Սակայն մրցաշարը 2 շրջանով էր անցկացվում:

**- Չեմպիոնի տիտղոսի համար պայքարելու հույսերը չե՞ն մարել:**

- Իհարկե ոչ: Ինձ ծեր չեմ համարում, եթե կարելի է այդպես արտահայտվել: Կձգտեմ առաջիկայում իմ լավագույն խաղը ցուցադրել: Սակայն անհրաժեշտ է որոշ փոփոխություններ կատարել, որոնք այս պահին ինձ համար կարեւոր են:




**- Եվ որո՞նք են դրանք:**

- Երբեմն փորձում եմ միանգամից շատ բանի հասնել: Հավանաբար անհրաժեշտ է նախապատրաստական շրջանում ավելի կարեւոր բաների վրա կենտրոնանալ:

**- Աշխարհի չեմպիոնի թագի համար պայքարում ո՞ւմ հնարավորություններն ես բարձր գնահատում:**

- Իմ կարծիքով, Մագնուսը հիանալի հնարավորություն ունի աշխարհի հաջորդ չեմպիոնը դառնալու: Սակայն դա հեշտ չի լինի: Ինչպես ցույց է տալիս կյանքը, Անանդն աշխարհի չեմպիոնի կոչման համար մրցախաղերում շատ ուժեղ է խաղում: Հետաքրքրական կլինի հետեւել նրանց մրցավեճին:

**- Այսպիսով չե՞ս բացառում, որ աշխարհի չեմպիոնի կոչման համար անցկացվելիք հաջորդ մրցափուլում հնարավոր է հանդիպես նոր չեմպիոնի հետ:**

- Չեմ բացառում: Շատ հավանական է, որ հենց այդպես էլ կլինի:

**- Որքա՞ն էր քեզ համար անակնկալ Թեյմուր Ռաջաբովի թույլ ելույթը:**

- Դա բոլորի, այդ թվում եւ ինձ համար մեծ անակնկալ էր, քանի որ նա կայուն ելույթներով աչքի ընկնող շախմատիստ է: Հավանաբար իր դերը խաղաց նրա վրա եղած ճնշումը: Չէ՞ որ մրցաշարի գլխավոր հովանավորն ադրբեջանական ՍՈԿԱՐ-ն էր: Ռաջաբովը ձգտում էր յուրաքանչյուր պարտիայում մինչեւ վերջ պայքարել: Սակայն ինչպես ցույց տվեց Լոնդոնի մրցաշարը, դա շատ վտանգավոր է: Բայց մեծ անհաջողությունները հաճախ նպաստում են մեծ հաջողությունների: Այնպես որ Ռաջաբովը դեռ կպայքարի ու կվերադառնա համաշխարհային դասակարգման ցուցակի առաջատարների շարք: Բոլորի համար նա մնում է որպես շատ ուժեղ գրոսմայստեր:

**- Այս իրավիճակում ի՞նչ խորհուրդ կտայիր նրան:**

- Թեյմուրը բավականին ուժեղ շախմատիստ է եւ կարծում եմ, որ իմ խորհրդի կարիքը չի զգում:

**- 2016-ին Բաքվում կայանալիք շախմատի համաշխարհային օլիմպիադայի թեման բազմիցս է բարձրացվել: Դու մեկ անգամ չէ, որ նշել ես, թե Հայաստանի հավաքականի մասնակցության հարցը պայմանավորված կլինի երկու երկրների միջեւ տիրող իրավիճակով: Կցանկանայի հարցն այլ կերպ ձեւակերպել: 2014-ին Երեւանում կայանալիք աշխարհի թիմային առաջնությանը Ադրբեջանի հավաքականի մասնակցությունը կարո՞ղ է նպաստել, որ Հայաստանի ընտրանին հանդես գա Բաքվում անցկացվելիք օլիմպիադայում:**

- Դա մեզ բոլորիս հաճելի քայլ կլինի: Այս պահին չեմ կարող գուշակել, թե ինչ կլինի Ադրբեջանի հավաքականի մասնակցությունից հետո: Ամբողջ թիմի անունից խոսելը դժվար է: Անձամբ ես հույս ունեմ, որ կհաջողվի մեկնել Բաքու, քանի որ շատ եմ ցանկանում գտնվել Ադրբեջանի մայրաքաղաքում: Սակայն պետք է իրերին օբյեկտիվորեն նայել: Անցած տարիների իրադարձությունները վկայում են, թե ամեն ինչ չէ, որ հարթ է 2 երկրների հարաբերություններում:

## Դավիթ Գրաֆը շուտով կրկին ռինգ դուրս կգա

***Առաջին ծանրքաշային կարգի հայ բռնցքամարտիկ, հայ հանդիսատեսի սիրելի Դավիթ Գրաֆին (մեզ հայտնի Վահագն Սահակյանին) ապրիլի 13-ին կրկին կտեսնենք Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում մենամարտելիս: Արհեստավարժ բռնցքամարտիկն իր հերթական մրցամարտը կանցկացնի հունգարացի Յոզեֆ Նագիի հետ, որը 30 հաղթանակած մենամարտերից 14-ն ավարտել է նոկաուտով:***

**- Վահագն, ինչո՞վ էր պայմանավորված մրցամարտերին չմասնակցելու քո երկար դադարը:**

- Նախ թույլ տուր շնորհակալությունս հայտնել բոլորին, որոնք սրտատրոփ սպասում են հերթական մրցամարտիս եւ հետաքրքրված են իմ յուրաքանչյուր մասնակցությամբ: Վերջին կես տարում Զաուերլանդ ակումբը ինձ առաջարկել էր երկու հակառակորդներ, որոնք հրաժարվեցին ինձ հետ մենամարտել: Ի դեպ` նրանցից մեկն ազգությամբ թուրք էր:

**- Իսկ ինչո՞ւ ես ժպտում...**

- Դե իմ թուրք հակառակորդը հրաժարվեց, սակայն հունգարացի Յոզեֆ Նագիին բախտ կվիճակվի ինձ հետ մրցելու: Կարծում եմ գոնե նա մենամարտից առաջ չի հրաժարվի իմ դեմ պայքարից...

**- Իսկ ի՞նչ ուղերձ կհղեիր դու նրան:**

- Իմ խորհրդատու Ժիրայր Բասմաջյանը ինձ միշտ ասում է. «Տե՜ս, հա, ռինգի տերը դու ես...», իսկ ես էլ պատասխանում եմ. «Կպաշտպանեմ այն մինչեւ



վերջ... մարտը կավարտեմ հաղթանակով»:

**- Իսկ ի՞նչ տեմպերով են ընթանում քո մարզումներն այսօր:**

- Հատկապես աշխատում եմ կատարելագործել իմ ոճը: Կարծում եմ, այն հաջողվում է ինձ: Իսկ դա ակտիվ եւ ինտենսիվ մարզումների արդյունք է:

**- Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունես առաջիկա մենամարտից:**

- Աշխարհի լավագույն բռնցքամարտիկների սանդղակում դեպի վեր բարձրանալ եւ մինչեւ տարվա վերջ հնարավորություն ստանալ մասնակցելու միջմայրցամաքային EM (Եվրոպայի մրցաշարի) առաջնությանը:

**- Շնորհակալություն տրամադրած ժամանակիդ համար եւ ցանկանում եմ հաղթանակ առանց վնասվածքների:**

**ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ**
**Բեռլին**

## Մեդալ նվաճել չհաջողվեց

Տաշքենդում մեկնարկած ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում հայ ծանրորդներից առաջինը մրցահարթակ դուրս եկավ մինչեւ 50 կգ քաշային Մարզպետ Մինասյանը: Պոկում վարժությունը սկսելով 80 կգ-ից, նա հաջորդ փորձից իրեն ենթարկեց 85 կգ-անոց ծանրաձողը, իսկ ահա 89 կգ-ը բարձրացնել չկարողացավ: Այդ վարժությունում նա գրավեց 6-րդ տեղը:

Հրում վարժությունն ավելի հաջող էր հայ ծանրորդի համար, որը հաջորդաբար բարձրացրեց 90, 95 եւ 100 կգ ու գրավեց 7-րդ տեղը: Երկամարտի 185 կգ (85+100) արդյունքով Մարզպետ Մինասյանը զբաղեցրեց 6-րդ տեղը:

Չեմպիոնի տիտղոսին արժանացավ չինացի Քսիոնգհուի Ջիան, որը ցույց տվեց 200 կգ (93+107) արդյունք: 2-րդ տեղը երկամարտի 197 կգ (86+111) արդյունքով զբաղեցրեց կորեացի Յոնգ Յու Պակը: Բրոնզե մեդալը նվաճեց ուզբեկ Մաշխուրբեկ Յուլդաշեւը` 196 կգ (86+110):

## Մանուչարյանը հեթ-տրիկի հեղինակ



**Եկատերինբուրգի «Ուրալում» հանդես եկող Էդգար Մանուչարյանը «Սիբիրի» հետ խաղում դարձավ հեթ-տրիկի հեղինակ: Գոլերից 2-ը նա խփեց 11 մ հարվածներով, որոնց իրավունքն ինքն էր վաստակել: Հիշեցնենք, որ նախորդ խաղում էլ Մանուչարյանը 2 անգամ գրավել էր «Տոմի» դարպասը: Էդգարն առաջնությունում անցկացրած 8 հանդիպումներում 5 գոլի հեղինակ է դարձել: «Ուրալը» 26 խաղում վաստակած 58 միավորով գլխավորում է առաջին խմբի աղյուսակը եւ արդեն ապահովել է ՌԴ պրեմիեր լիգայի ուղեգիրը:**

## Սերգեյ Մովսիսյանը կրկին հաղթեց

**Ռուսաստանի շախմատի թիմային առաջնության 2-րդ տուրում Սանկտ Պետերբուրգի շախմատի ֆեդերացիայի թիմը 2-րդ հաղթանակը տոնեց` 3,5-2,5 հաշվով պարտության մատնելով «Բելոռեչենսկին»: Թիմի կազմում 3-րդ խաղատախտակի վրա խաղացող Սերգեյ Մովսիսյանը կրկին հաղթեց` առավելության հասնելով Պավել Տրեգուբովի նկատմամբ:**

**2 տուրից հետո Սանկտ Պետերբուրգի թիմը 8,5 միավորով 2-րդ տեղում է: Առջեւում է Կազանի թիմը, որն ունի 9,5 միավոր: Կես միավորով աղյուսակը եզրափակում է Դեսնոգորսկի «Ատոմը», որի կազմում հիմնականում հայ շախմատիստներ են ընդգրկված: «Ատոմը» 0,5-5,5 հաշվով պարտվեց «Ժիգուլիին»: Միակ կես միավորը թիմին պարգեւեց Գեւորգ Հարությունյանը` ոչ-ոքի խաղալով Յուրի Յակովիչի հետ: Գեւորգ Պողոսյանը, Վահե Բաղդասարյանը եւ Տիգրան Սիմոնյանը կրկին պարտվեցին:**

## Հայ շախմատիստներից 3-ն առաջատարների խմբում են

**Դուբայի շախմատի մրցաշարի 2-րդ տուրից հետո Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանն ու Հովիկ Հայրապետյանը 2 միավորով աղյուսակը գլխավորող 38 շախմատիստների թվում են: Հակոբյանը հաղթեց Մուրալի Կարթիկեյանին, Սարգսյանը պարտության մատնեց Նարայանան Լինային, իսկ Հայրապետյանն առավելության հասավ Նիրանջան Նավալգունդի նկատմամբ:**

**Առաջին հաղթանակը տոնեց մեկնարկում անհաջողության մատնված Մարկ Բասենցյանը, որի մրցակիցն Ամբարեշն էր: Տիգրան Պետրոսյանը ոչ-ոքի խաղալով Էդուարդ Կանտերի հետ, վաստակեց 1,5 միավոր: Տուրն անհաջող էր Լիլիթ Գալոյանի համար, որը մեկնարկում հաղթելուց հետո պարտվեց Միխայլո Ալեքսիենկոյին:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի ցանկ* | | | | | |
| 1 | Բուզանդի 1/3 7-րդ հարկ | 163.1 | հասարակական | 15 տարի | 81550 դրամ |
| 2 | Բուզանդի 1/3 2-րդ հարկ | 72.3 | հասարակական | 15 տարի | 36150 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ ապրիլի 25-ին ժամը16-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչեւ 2013թ. ապրիլի 25-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Հողամասի մակերեսը | Շինության մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույքերի ցանկ* | | | | | | |
| 1 | Ծերեթելի 44 | 194.18 | 170.19 | հասարակական | 5 տարի | 25000 դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ. ապրիլի 25-ին ժամը16-ին, ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչեւ 2013թ. ապրիլի 25-ը, ժամը14-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հալաբյան 27շ. 75 տարածք | ոչ բնակելի տարածք | | 56.7 | 3,300,000 |
| 2 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 3,000,000 |
| 3 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 2,200,000 |
| 4 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 6,300,000 |
| 5 | Զաքյան փողոց 1շենք 38 տարածք | ոչ բնակելի տարածք | | 58.1 | 7,400,000 |
| 6 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.50 | 195.50 | 8,300,000 |
| 7 | Ռայնիսի փողոց 26/3 | կաթսայատուն | 240.75 | 240.75 | 6,200,000 |
| 8 | Չարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2,251.36 | 1,244.00 | 363,900,000 |
| 9 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.10 | 20,300,000 |
| 10 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 17,600,000 |
| 11 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 9,850,000 |
| 12 | Սեբաստիա 18/2 | կաթսայատուն | 194.83 | 173.00 | 8,700,000 |
| 13 | Վիլնյուսի փող.,67/2 | կաթսայատուն | 242.50 | 212.75 | 6,700,000 |
| 14 | ԿԶՀ հ.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.10 | 7,200,000 |
| 15 | Կուրղինյան 5/3 | կաթսայատուն | 162.97 | 135.50 | 7,500,000 |
| 16 | Սաֆարյան 16/4 կաթսայատուն | կաթսայատուն | 306.25 | 288.00 | 12,400,000 |
| 17 | Խաղաղ Դոնի 12/8 | կաթսայատուն | 163.80 | 163.80 | 7,550,000 |
| 18 | Ուլնեցու փողոց 3-րդ փակ. 4/2 | կաթսայատուն | 249.30 | 129.70 | 11,700,000 |
| 19 | Մոլդովական փողոց 50/9 | կաթսայատուն | 192.66 | 163.10 | 8,850,000 |
| 20 | Այասի 71/3 | կաթսայատուն | 41.4 | 29.5 | 1,255,000 |
| 21 | Այասի 71/4 | կաթսայատուն | 32.25 | 24.37 | 1,030,000 |
| 22 | Հ/Ա Բ-2 թաղ. 92 շենքի հ.20 | ոչ բնակելի տարածք | | 58.7 | 6,000,000 |
| 23 | Նալբանդյան 57 (49/5) | կաթսայատուն | 133.5 | 99.6 | 28,250,000 |
| 24 | Աղբյուր Սերոբի 1 շենք 64 տար. | ոչ բնակելի տարածք | | 44.2 | 5,700,000 |
| 25 | Բաղրամյան 30 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 89.7 | 14,100,000 |
| 26 | Նալբանդյան 50 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 14 | 1,700,000 |
| 27 | Մամիկոնյանց 1/3 | կաթսայատուն | 307.20 | 280.90 | 23,900,000 |
| 28 | Դավթաշեն 4 թաղ. ԿԶՀ 1 | կաթսայատուն | 247.00 | 216.00 | 16,200,000 |
| 29 | Դավթաշեն 2 թաղ. ԿԶՀ 1 | կաթսայատուն | 237.12 | 206.60 | 12,600,000 |
| 30 | Դավթաշեն 2 թաղ. ԿԶՀ 3 | կաթսայատուն | 242.25 | 211.10 | 10,800,000 |
| 31 | Մ.Խորենացի 30 | կաթսայատուն | 156.89 | 128.30 | 20,700,000 |
| 32 | Իսակովի պող 36/1 19,շին | ոչ բնակելի տարածք | | 39.90 | 3,500,000 |
| 33 | Մ. Բաղրամյան 1 փակ. 14 շ., 162 տարածք | ոչ բնակելի տարածք | | 136.10 | 52,800,000 |
| 34 | Չեխովի 48/4 | կաթսայատուն | 160.25 | 131.30 | 12,750,000 |
| 35 | Նորաշեն 7 | անավարտ շինություն | 2,667.00 | 61.48 | 26,800,000 |
| 36 | Նորաշեն 9 | անավարտ շինություն | 968.07 | 678.87 | 10,200,000 |
| 37 | Բաղրամյան 2 շենքի տարածք | ոչ բնակելի տարածք | | 38 | 5,600,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում` WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի` 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ ապրիլի 25-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին` մինչև 2013թ ապրիլի 25-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամանիշերի փորձագիտական համալիր ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ` դրամանիշերի փորձագիտական համալիր ձեռքբերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին`

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող`

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.
2) մասնագիտական փորձառություն.
3) տեխնիկական միջոցներ.
4) ֆինանսական միջոցներ.
5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. մայիսի 21-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց, 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. մայիսի 21-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. մայիսի 27-ին ժամը 16:00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է`

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am):

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ` ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ` «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

***ՀՀ Կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ակսոն» ապրանքա-հումքային Բորսայի հարթակում սույն թվականի ապրիլի 11-ից, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 12:00-ին իրականացվելու է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մալուխների, սարքերի, սարքավորումների, ռադիո դետալների, ԱՀԿ-ների եւ այլ ապրանքանյութական արժեքների աճուրդային վաճառք: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել Բորսա` ք.Երեւան, Ագաթանգեղոս 6/1 հասցեով կամ www.akson.am կայք, կամ զանգահարել (010)52-61-85 հեռախոսահամարով:

## ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

**մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում` լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե` Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:**



*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

**ՍԱՐԻ ԹԵՅ**

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ
**ԸՆՏԻՐ ԹԵՅ**

25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

Լավագույն նվերը Հայաստանից

**Մեծածախ գնումների համար զանգահարել 094-824745, 091-901718**

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան 9.4.2013, գինը` 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: